Մրցույթի Հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ «Գյումրու Կարա-Մուրզայի անվան պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ հետևյալ առարկաները դասավանդող մասնագետի թափուր տեղի համար՝

1. «Գծանկարչություն»՝ «Դիզայն» մասնագիտության գծով,
2. «Գեղանկարչություն»՝ «Դիզայն» մասնագիտության գծով

Որակավորման պահանջներ՝

- Մանկավարժական համապատասխան որակավորում (բակալավրի, մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճանով) կամ բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական գործունեության առնվազն 2 տարվա աշխատանքային փորձ:
- Մանկավարժական ունակություններ, հաղորդակցման և թիմային աշխատանքի հմտություններ:
- Ստեղծագործ մոտեցում, ժամանակակից մեթոդների կիրառում:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերը.

- դիմում (Ձև 1),
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
- անձը հաստատող փաստաթուղթ (բնօրինակը և պատճենը),
- ինքնակենսագրություն (Ձև 4),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթերը (դրանց առկայության դեպքում)

Փաստաթղթերի ընդունման ժամկետները.

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրվանից սկսած 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև ***2026 թվականի սեպտեմբեր 10-ը ներառյալ:***

- **Երկուշաբթիից-ուրբաթ**՝ ժամը 09:00-16:30
- **Շաբաթ**՝ ժամը 09:00-14:30

Փաստաթղթերի ներկայացման եղանակները.

1. Էլեկտրոնային հասցե՝ ***info.karamurza@gmail.com***
2. Առձեռն՝ Քոլեջի կադրերի բաժին, հասցե՝ ***ՀՀ, ք. Գյումրի, Ղ. Ղուկասյան 30***

Մրցույթի անցկացման օրը, ժամը, վայրը.

Մրցույթը տեղի կունենա **2026 թվականի սեպտեմբերի 14-ին, ժամը 13:00-ին**, ՀՀ, ք. Գյումրի, **Ղ. Ղուկասյան 30** հասցեում:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝

- **(0312) 5-13-12**
- **(098) 35-45-93**